

բով. Ներսէս Կրացի անուամբ վարդապետ մը, որ Ս. Հրէշտակապետ Վանքին մէջ կ'ընդօրինակէր ճարտրեսիւր մը, ուրիշներու հետ բռնութեամբ կը տարուի Եգիպտոս՝ փնտռուած աւաջնորդին նմանութիւնը տեսնելով անոր վրայ. Երուսաղէմի Վարդան պորքը. և Տեսուչը Արքանամ Վրդ. Մէրտինցի՝ Եգիպտոս կ'երթան և հազար դահեկան գլխահարկ վճարելով հազիւ կրնան ազատել զանոնք գերութենէ: Ներսէս Կրացի այս դէպքը կը պատմէ իր ընդօրինակած ճարտրեսիւրին յիշատակարանին մէջ (ՄՁ. Ձեռ. Թ. 282, Սաւարան, էջ 607):

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ., Մբ. — Նւ. Թիֆլիզի:

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ՊՈՒՍԵՅԻ, Մբ. — Ձա. 1868ին. Ժամարար ի Յոպպէ, 1870ին. ՏՓ, կը վախճանի 1876:

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ՎԱՆՅԻ, Մբ. — Ձա. 1817. «մկա» կոչեցեալ:

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ., Մբ. — Ս. Յարութեան տաճարի յախճապակի աղիւմներու վրայ կը տեսնուի իր անունը 1719ին:

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. — 1793ին, իբր Ռէմլէի տեսուչ կը յիշատակուի:

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. — 1764ին, իբր Եաֆայի տեսուչ կը յիշատակուի:

ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ, ԵԳԻՊՏԱՅԻ. — Ծ. յԱղեքսանդրիա 1850ին. եզրօրորդի Կեսարացի Արքանամ վարժապետի: Ի վարձատրութիւն՝ ընդունած է Եգիպտոսի Խտիվ Մէհմէտ Ալի փաշայէն Ղարպէ գլուղը իր հողերով, և հոն հիմնած է Ս. Թաղոս և Բարդուղիմէոս անուամբ մատուռ մը: Արքանամ փաշա աշակերտած է Երուսաղէմի Ժառ. Վարժ.ին, սատարած է Աստուածատուր Եպս. Յովհաննէսեանի ԺՊԵ. երկու հասոր գիրքին տպագրութեան ծախուց: Վախճանած է 1911ին և թաղուած է Աղեքսանդրիոյ Ս. Պողոս Պետրոս եկեղեցւոյն կից պարտէզին մէջ:

ԱԴԱՄ ԳԱԼՖԱ. — 1813ին Եօթն հայ գործաւորներով կը ժամանէ Երուսաղէմ, ընկերանալով Եկեղեց. Քննիչ մարմնոյն:

ԱԴԱՄ ՎՐԴ. — Կ. Պոլսէն, իր եզրօրորդի նօտար Յովհաննէսի 1776 թ. նամակէն՝ ուղղեալ առ Յովակիմ ՊԵ., կը հասկըցուի թէ Աղամ վրդ. Երուսաղէմի Ս. Յակոբայ Վանքին մէջ